

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ ՍԻՍՏՐԻԱՑՈՒՄ

ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ

Նոր մինիստրութիւններ Աւստրիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և նոչ վերաբերում և Ֆրանսիային և Իտալիային—զա՞ անսովոր երեսոցթ չէ, բայց Աւստրիայում դա մի ամբողջ անցք է, որովհետև 14 տարի է, ինչ Աւստրիայի մինիստրութիւնների գլուխ կանգնած էր կոմս Տատֆեհ: Այդքան երկար կառավարութիւն հասկանալի է միայն այն երկիրներում, ուր մինիստրութիւնները այնքան մեծ կախումն չունին պարլամենտից: Իսկ այդպիսիներիցն է Աւստրիան, ուր կայսերական արքունիքը ամենաառաջին տեղն է բռնում մինիստրութիւն պահպաննելու վակտորների մէջ: Եւ եթէ կոմս Տատֆեհն կարողացաւ այդքան երկար ժամանակ երկիր կառավարել, այդ նրանից էր, որ անսահման էր հաւատը կայսեր դէսլի այդ անձը, որի հետ կայսրը կապւած է նաև ազգակցական կապով: Բայց այդ ևս բաւական չէր լինիլ եթէ կոմս Տատֆեհն չունենար ամեն բանի յարմարելու քաղաքականութիւնը, մի քաղաքականութիւն սակայն, որը դափնեալ պահկներ շբերաւ նորա հեղինակին: Զնայած իւր դիմացկութեան՝ կոմս Տատֆեհն չթողեց մեծ մինիստրի անուն, և ընկաւ առանց ժողովրդականութիւնն ունենալու, չնայած որ նա ընկաւ՝ մի ժողովրդական դատ պաշտպանելիս—այն է որ պարլամենտական ընտրութիւններին մասնակցեն աւելի մեծ ժողովրդական խաւեր քան մինչ այժմ է:

Բայց հանգամանքը այն է, որ կոմս Տատֆեհն սրտի մօտ չէին այն խնդիրները, որ նա կարողանում էր անցկացնել իւր մինիստրա-

կան պաշտօնավարութեան երկար ընթացքում. նորա սիրուը չեր բարբախում խնդիրների համար. նորա հոգսը աւելի այն էր, որ կարողանաց զժւարութիւններից գուրս զալ, բաւարարութիւն տալով և սրան և նրան. նորա հոգսն էր մեալ իւր տեղում:

Տաավելի մինիստրութեանը յաջորդեց ալսպէս ասած՝ դաշնուկցական մինիստրութիւնը, ոչ իսկոյն, այլ բաւական երկարատև կոմբինացիաներից ու բանակցութիւններից յետոց Մինիստրութիւնը կազմւած է երեք-չորս տարրերից, որոնց միասին գտնւելը զարմանալի կը թւայ ուրիշ երկիրներում, բայց ոչ Աւստրիայում: Աւստրիայի ներքին հանգամանքները շատ տարբերուում են ուրիշ երկիրների ներքին հանգամանքներից, և եւրոպական ներքին քաղաքականութեանը հետևողներից շատերը նոյն իսկ դժւարութիւն կը զգան լաւ ըմբռնել աւստրիական բոլոր ներքին հոփների իմաստը: Ամենից առաջ զիտենալու է որ, թէե Աւստրիան և Ունգարիան մի պետութիւն են կազմում, բայց միայն նրանով, որ նոքա միացած են թագաւորական տնով. Աւստրիայի կայսրը է միւնոյն ժամանակ նաև Ունգարիայի թագաւորը. ապա նոքա միացած են արտաքին քաղաքականութիւնով, հետևասպէս ունեն մի միակ մինիստր արտաքին քաղաքականութեան համար. ընդհանուր է նաև պատերազմական մինիստրը և պետական ֆինանսների մինիստրը: Բայց այդ ընդհանուրից գուրս՝ այդ երկու երկիրները կառավարուում են իւրաքանչիւրը իւր սեպհական մինիստրութիւնով և պարլամենտով: Աւստրիան ունի իւր մինիստրութիւնը և իւր պարլամենտը, Ունգարիան ունի իւր մինիստրութիւնը և իւր պարլամենտը, որոնցից և, կայսրի կամ թագաւորի հետ ի միասին, կախւած է իւրաքանչիւրի ներքին քաղաքականութիւնը: Ագուիսով ամեն մէկը ունի իւր սեփական մինիստրները՝ ներքին գործերի համար, ֆինանսների, ժողովրդական լուսաւորութեան, առևտութի, արդարապատութեան համար և այլն:

Կոմս Տաավելի մինիստրութիւնը վերաբերում էր միայն Աւստրիային և ոչ նաև Ունգարիային, և կոմս Վինդիշցրէցի ներկայ մինիստրութիւնը միայն աւստրիական խնդիր է և ոչնչով չի շօշափում Ունգարիային:

Բայց Աւստրիա ասածդ ինքը մի բարդ բան է, և նորա ներ-

քին քաղաքականութիւնը շատ բարդ վակտորների ազդեցութեանն է ևնթարկւած։ հետեւապէս նաև աւստրիական մի մինիստրութիւն, որը կամենում է պարլամէնտի արամագրութիւններին համապատասխանել, անհնարին է որ միակերպ մտածող մարդկանցից կազմը լինի, քանի որ նոյն ինքն պարլամէնտը մի խայտաճամուկ ժողով է ներկայացնում։ Այդ նրանից է, որ Աւստրիան բաղկացած է ազգայնական կողմով ոչ մէկ այլ մի քանի ազգերից։ Երկրորդ՝ այդ նրանից է որ այլ և այլ ազգերի մէջ չկայ մէկը որ մեծ գերակշռութիւն ունենաց միւնքների վրայ և իւր ուսերի վրայ միայն կրէ երկրի ամբողջ կուլտուրական լաւաջդիմութեան ծանրութիւնը։ Այդպիսի գէպօւմ պէտք է, մի պետութիւն կազմելու համար, նւէցարիայի նման դաշնակցութիւն կազմէր, ուր ամեն մէկ դաշնակցող իւր առանձին ներքին կեանքն ունենար։ Բայց Աւստրիայում նոքա կարւած են իրար հետ Հաբսբուրգեան միապետների տոհմացին քաղաքականութեամբ միայն, այդ միութիւնը պատմականապէս հիմնած է նւաճումների վրայ, նւաճումներ, սակայն, որոնք ոչ թէ յաղթութիւններ են եղած մի ազգի, (որ պիտի լինէր գոյութիւն չունեցող աւստրիական մի ազգ), այլ մի թագաւորական զօրեղ տոհմի, որը ճիշդ է գերմանական է և հիմնած է եղել իւր պետութեան գերմանական տարրի վրայ։ Ի զուր չեն կոչում Աւստրիայի երկիրները՝ թաղի (արքունիքի) երկիրներ (Kronländer)։ Այդ երկիրներն են՝ բուն Աւստրիան (ներքին և վերին Աւստրիա), գքառութիւններ՝ Զալցբուրգի, Շտայցերմարկի, Կէրնտէնի և Կրախի, աղաս աւստրիական-իլլիրիական ծովափը, Տիրոլ, Բոհեմիա, Մարավիա, Նէզիա, Գալիցիա, Բուկովինա և Դալմատիա։ Այդ բոլոր երկիրների ազգաբնակութիւնները մի միապազաղ մասսա չեն կազմում, և զոցա մէջ առնաւզն երեք ազգութիւններ կան, որոնք իրանց ինքնուրոյնութիւնը պահպանել են և զարգացրել՝ աւստրիական գերմանացիք, բոհեմացիք (չէխեր) և գալիցիացիք (լեհ-հեր)։ Գերմանացիք, չեխեր և լեհացիք-դոքա ոչ միայն կամենում են իրանց ինքնուրոյն զարգացումն ունենալ, այլ և զոցա ներքին ընդհարումները կազմում են աւստրիական ներքին քաղաքական կեանքի գրեթէ ամբողջ բովանդակութիւնը։ Դոցանից Բոհեմիայի շեխերը իրանց ձգտումը հասցրել են մինչեւ անզամ այն

աստիճանի, որ խնդիր են յարուցել որ աւստրիական կալվարը ոչ միայն ինքն ըստ ինքեան ձանաշւի որպէս թագաւոր Բոհեմիայի, այլ և առանձին թագալրութիւն կատարւի, ինչպէս այդ լինում է Ունգարիայի նկառմամբ, հետեւապէս որ Բոհեմիան աղագայում բռնի ընդհանուր պետութեան մէջ Ունգարիայի նման դիրք:

Աւստրիական ամեն մինիստրութիւն հարիադրւած է առնւազն այդ երեք տարրերի յատուկ ձգառութերը հաշւի առնել: Կոմս Տուաֆէն, 14 տարի մինիստրութեան գլուխ կանգնել կարողացաւ շնորհիւ այն բանի, որ նրան յաջողւում էր պարլամէնտի մէջ ներկայացուցչութիւն ունեցող այլ և այլ ազգայնական կուսակցութիւնների պահանջներին այսպէս կամ այնպէս բաւարարութիւն տալ, բայց ոչ որպէս այդ ուղղութեան պետական անձն, այլ աւելի միայն որպէս ճարպիկ գործիչ: Որ նորանից շատ գժգոհ էին աւստրիացի գերմանացիք — այդ շատ պարզ է, որովհետեւ աւստրիացի գերմանացիք կուգէին գերիշխող տարր ճանաչւել և այլ ազգերին իրանց քաղաքական և կուլտուրական թևերի տակ պահել: Բայց իրանց թւի սակաւութիւնը մի այդպիսի դերի համար՝ ստիպում է նոցահաշտւել այլ ազգերի պահանջների հետ, ինչպէս նոքա պէտք է հաշտւէին ծաավիկի պէս հաշտարար մինիստրութեան հետ: Մենք շուտով կը տեսնենք թէ ազգայնական տարրը ինչպիսի ներկայացուցչութիւն ունի Վինդիշդրէցի ներկայ մինիստրութեան մէջ:

Բայց մեր ցայխմ պարզաբանած հանգամանքը դեռ ևս միակը չէ դեր խաղում աւստրիական մինիստրութեան կազմակերպութեան, հետեւապէս նաև աւստրիական ներքին քաղաքականութեան մէջ:

Սա մի ողորմելի բան կը լինէր եթէ մի մինիստրութիւն ուրիշ ոչինչ ներկայացնէր բայց եթէ միայն այս ու այն ազգի ներկայացուցչութիւն: Ոչ, Աւստրիան ունի նաև ողղութեան խնդիրներ, որոնք նշանաւոր գեր են խաղում մինիստրական կոմիտենացիաների մէջ: Գուցէ աւելի լաւ յայտնած լինեմ միաքս, եթէ ասէի թէ՝ բացի ազգայնութեան ներկայացացութիւնից՝ աւստրիական ամեն մինիստրութիւն կրում է մի որոշ գոյն, որը աւստրիական սոցիալական կազմակերպութեան արտայացառութիւնն է: Աւստրիան առ հասարակ մեծ կալւածատիրութեան երկիր է. հին ֆէութալականութիւնը դեռ ևս ահազին ոց ունի այդ երկրում, և իմ

խօսքը ոչ միայն աւստրիական գերմանացոց մասին է, այլ և Բռնհեմիայի, Գալիցիայի և այլն։ Բազմաթիւ են մեծ կալւածատէրերը, որոնք ահազին սոցիալական ոց են կազմում շնորհիւ այն բանի, որ նոքա իմացել են իրանց պահել ազնւականութեան բարձր մակերեսովթի վրայ և փայլել պետական ծառայութեան մէջ, որպէս նաև իրանց կալւածների լաւ կառավարութեան մէջ։ Այդ բարձր կալւածատէր ազնւականութիւնն ունի իւր առանձին ներկացուցութիւնը—և կազմում է այսպէս կոչւած Hertrenhaus, այսինքն տէրերի ժողով, բազկացած 188 ազնւականներից։ Բայց բացի այդ՝ կայ և ժողով պատգամաւորների, որոնց ընտրովը ընդհանուր ժողովուրդն է, բայց միայն ընտրելու իրաւունքը այնքան ընդհանուր չէ, որքան Դերմանիայում։ Ֆրանսիայում և այն։ Այդ՝ նաև պատգամաւորների ժողովում այդ հին կալւածատէր-ազնւական դասակարգից շատ պատկառելի թուով պատգամաւորներ են ընտրուում։ 353 անդամից է բազկացած պատգամաւորների ժողովը, և նոցանից այժմ՝ 85 հոգի մեծ կալւածատէրերից են։ Մի խօսքով կալւածատէր-ազնւականութիւնը ահազին ոց է Աւստրիայում, շատ սերտ կապւած թէ կայսերական տան հետ, որը մեծ հեղինակութիւն ունի պետական ամեն կարգի խնդիրներում և թէ կաթոլիկ եկեղեցու հետ։

Դորա հետ կապւած է որահամնողական ոգին, որ այնքան բնորոշում է Աւստրիային առ հասարակ, մանաւանդ Մետտերին ի խի շփուան, որը ջանկ էր անում թազի և ազնւականութեան՝ սորա պատմական, բայց հետացած հիմունքների վրայ պահպանած՝ նահապետական իշխանութիւնը սուշտապաննել մինչև վերջին ծայր։ Բայց ոչ միայն Մնտուերնիխի շփուան ծայրայեղ պահպանաղական էր, այլ և աւստրիական ազատամիաներին՝ լիբերալներին՝ անհնարին է որ ուրիշ երկիրներում ազատամիա անունը տան, այնքան նաև նոքա պահպանողական են։ Բայց ամեն ինչ համեմատականն է, նոյն խի պահպանողականութիւնը և ազատամտութիւնը և վաղեմի մինխստը Շմերլինգի լիբերալ ուղղութիւնը այնքան արաւ միայն, որ գոնէ բուրժուազիային կեանքի կոչեց ազնւականների հետ միասին կառավարելու՝ գաւառում, համայնքում, կաթոլիկ եկեղեցուց ազատած ուսումնարաննում, երդւեալների գաստարաններում, պարլամենտում։ Խի այդ լիբերալ սահմանադրութիւնը ոչնչով էապէս չշօշա-

փեց առանձնաշնորհումները միապետութեան, ազնւականութեան և կաթոլիկ եկեղեցու:

Բայց չնայած դորան, կուիւը Մետոնիսի և Նմերլինգի շկոլաների մէջ այնքան սասարիկ էր, որ մի ժամանակ թւաց թէ նոքա ընդհանուր այլ ևս ոչինչ չունեն: Նմերլինգի ծրագրած սահմանադրութիւնովն է, որ Աւստրիայի բաժան բաժան ինչ որ 17 երկիրները միացրած են կենդրոնացնող ընդհանուր օրէնքների ներքոյ: Բայց այդ սահմանադրութիւնը ինքը, որպէս տեսանք, շատ պահպանողական է, որպէս պահպանողական է և Աւստրիայի սահմանադրական կուած կուսակցութիւնը:

Կոմս Տաաֆէի ներքին քաղաքականութիւնը չէր կալչում ոչ մէկի և ոչ միւսի ուղղութեան, այլ ներկայացնում էր մասսամբ կղերական մասսամբ դաշնակցական (Վեղերալիստ) հետեապէս և հակագերմանական ուղղութիւն:

Մետոնիսի շկոլայի աշակերտը ներկայումս կոմս Հոհենվարտն է, գլխաւոր ներկայացուցիչը այսպէս կոչւած կայսերութեան կոսակցութեան (Աայխսպարտայ—Reichspartei), որը իւր մեծ ծերութեան պատճառով՝ հրաժարաւեց մինիստր-նախագահ լինելու առաջարկից, Նմերլինգինը՝ վոն Պլենէր—գլխաւոր ներկայացուցիչը գերմանական-սահմանադրական կուսակցութեան:

Ահա այդ երկու մարդիկ՝ կոմս Հոհենվարտ և վոն Պլենէր, միացած լինական կուսակցութեան կամ, ինչպէս աւում է լինական կլուրի ալարագլուխ նաւուրսկի հետ՝ ներգործել են այժմեան մինիստրութիւնը կազմելու համար, որի գլուխ է անցնում բոհեմական (բայց ծննդով և կրթութեամբ գերմանացի) մեծ կալածատէր իշխան Ալֆրէդ Նինդիշգրէց: Այդ, ուրեմն, ամենից ասած կոալիցիական մինիստրութիւն պիտի լինէր, ուր ներկայացուցչութիւն պիտի գոնէին աւստրիական պահպանողական տարրերը գերմանացիներից և լինացիներից: Դեմոկրատիկական տարրը ացդպիսով դուրս է մնում:

Այդ մոքով մինիստրութիւնը կազմեց այսպէս. Վինդիշգրէց՝ մինիստր-նախագահ, Օլիւիէ մարդիկ վոն Բաքհէմ (Վազուեհեմ—Քրանսիական ծագումից)՝ ներքին գործերի մինիստր (Տաաֆէի մինիստրութեան մէջ նա էր առևտրի մինիստր), կոմս

Յալկեն հայն՝ երկրագործութեան մինիստր, կոմս Շեօնը բռն՝
արդարագասութեան մինիստր (լիսաւ պահպանողական, խիստ կա-
թողիկ և հակա-դերմանական)։ Ֆոն Մադեսկի (Լեհացի)՝ կրթա-
կան մինիստր (որքան տեղեակ ենք, դա առաջին դէպքն է Աւս-
տրիայում, որ կրթական մինիստրը գերմանացի չէ)։ Ֆոն Եաւոր-
սկի (լեհացի)՝ մինիստր Գալիցիայի համար (նոյնպէս խիստ պահ-
պանողական)։ Ֆոն Պլենէր՝ Փինանսական մինիստր։ Կոմս Վ. ու բժ-
բրանդ՝ առևտրական մինիստր (ֆոն Պլենէրի կուսակցութիւնից)։
Նոր մինիստրութեան զլիսաւոր հոգսը կազմելու են երեխ հար-
կերի բեփորմը և ընտրողական բեփորմը։

Z.

Ֆրանսիայի և Իտալիայի նոր մինիստրութիւնների մասին շա-
տանում ենք առ այժմ հետեւալով։

Գիւղիւցի'ի մինիստրութիւնը ընկաւ նորա արմատական երեք
անդամների (Պէյտրալ, Տերիէ և Վիետ) հրաժարականի պատճա-
ռով։ Նոր մինիստրութեան զլուխ անցաւ ցածմ պատգամաւոր-
ների ժողովի նախագահ Կազիմիրի Երիէ, որի մինիստրու-
թիւնը կազմւած է միմիայն չափաւոր հանրապետականներից, առանց
արմատականների։ Յիշենք մինիստրներից՝ Ապիւլլէրին, հանգու-
ցեալ Գամբետացի բարեկամը, որ ստանձնել է կրթական մինիստրի
պաշտօնը։

Աւելացնենք որ պատգամաւորների ժողովի նախագահ ընտրւեց
նախկին մինիստր-նախագահ Դիւպիւցի, չափաւոր հանրապետական-
ների թեեկնածուն, ընդդէմ արմատականների թեեկնածու Բրիսոնի,
որ մի ժամանակ նոյն ժողովի նախագահ էր ընտրւած։

Իտալիայում, Զիօլիստակի'ի ընկած մինիստրութեան տեղ՝ երկար
չանքերից յետոյ յաջողւեց կազմակերպել ներկայ մինիստրութիւնը
յայտնի Կրիսպի'ի նախագահութեամբ։ Իտալիայի ամենամեծ ցաւը՝
նորա Փինանսական ողորմելի վիճակն է, հետեւալիս և Կրիսպիի
մինիստրութեան ամենամեծ հոգսը — այդ կողմն է ուղղւած լինելու։

Z.